ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ -ի անվանական արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքների մասին

ՈՒրախ ենք տեղեկացնել, որ այսօր՝ **24.11.2016թ**.-ին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ի առաջնային տեղաբաշխման հարթակում հաջողությամբ տեղի ունեցավ **«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի** կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերի արդեն իսկ երկրորդ տեղաբաշխումը՝ ստանդարտ փակ աճուրդի միջոցով:

Աճուրդի ժամանակ տեղաբաշխվող պարտատոմսերն ունեցան աննախադեպ բարձր պահանջարկ՝ դոլարային տրանշի պարտատոմսերի պահանջարկը տեղաբաշխման ծավալի նկատմամբ 166% էր, իսկ դրամային տրանշի պարտատոմսերի նկատմամբ՝ 205%: Մեծ է եղել նաև աճուրդի մասնակիցների թիվը: Նման բարձր պահանջարկը վկայում է տվյալ արժեթղթերի նկատմամբ ներդրողների մեծ հետաքրքրությամբ, ինչը պայմանավորված է վերոնշյալ պարտատոմսերի ներդրումային առավելություններով՝ բարձր և գրավիչ տոկոսադրույքներ, բարձր իրացվելիություն /հիմքում ունենալով «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի նախորդ թողարկման պարտատոմսերի ձևավորած ակտիվ երկրորդային շուկան՝ գործարքների ծավալներն ու քանակը/, բարձր ֆինանսական ցուցանիշներ ունեցող հուսալի թողարկող ընկերություն և այլն:

Նշենք նաև, որ ինչպես առաջին թողարկման ժամանակ, այս անգամ նույնպես որպես տեղաբաշխող հանդես է գալիս «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ն: Վերջինս հաջողությամբ իրականացնում է թողարկման և տեղաբաշխման կազմակերպման բոլոր անհրաժեշտ գործառնությունները: «ՌԵՆԵՍԱ» ներդրումային ընկերությունը «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսայում կիրականացնի նաև պարտատոմսերի ամենօրյա գնանշումներ՝ ապահովելով նշված արժեթղթերի բարձր իրացվելիությունը:

Տեղաբաշխման արդյունքները առավել մանրամասն ներկայացվում են ստորև.

<u>Առաջին տրանշ</u>

Պարտատոմսերի դասը, ձևը	Անվանական արժեկտրոնային, ոչ փաստաթղթային
Պարտատոմսի տարբերակիչ ծածկագիր (ԱՄՏԾ)	AMGLBLB23ER1
Թողարկման ամսաթիվ (օր/ամիս/տարի)	24.11.2016թ.
Տեղաբաշխման ամսաթիվ (օր/ամիս/տարի)	24.11.2016թ.
Մարման ամսաթիվ (օր/ամիս/տարի)	24.11.2019թ.
Թողարկման ծավալ (ԱՄՆ դոլար)	1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար
Տեղաբաշխման ծավալ (ԱՄՆ դոլար)	1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար

Ներկայացված գնման հայտերի ընդհանուր ծավալ /ԱՄՆ դոլար/	1,663, 372.00 (մեկ միլիոն վեց հարյուր վաթսուներեք հազար երեք հարյուր յոթանասուներկու) ԱՄՆ դոլար
Բավարարված գնման հայտերի ընդհանուր ծավալ /ԱՄՆ դոլար/	1,000,371.71 (մեկ միլիոն երեք հարյուր յոթանասունմեկ) ԱՄՆ դոլար և 71 (յոթանասունմեկ) ցենտ
Աճուրդի մասնակիցների քանակ	9
Պահանջարկը տեղաբաշխված ծավալի համեմատ	166 %
Տեղաբաշխված արժեթղթերի կտրման գինը	100.00 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Տեղաբաշխված արժեթղթերի կտրման եկամտաբերություն	9%
Տեղաբաշխված արժեթղթերի միջին կշռված եկամտաբերություն	8.9856%
Մեկ պարտատոմսի անվանական արժեք (ԱՄՆ դոլար)	100.00 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային եկամտաբերություն	9 (ինը) %
Արժեկտրոնի վճարման պարբերականություն	կիսամյակային
Քանակ (հատ)	10,000 (տասը հազար)

<u>Երկրորդ տրանշ</u>

Պարտատոմսերի դասը, ձևը	Անվանական արժեկտրոնային, ոչ փաստաթղթային
Պարտատոմսի տարբերակիչ ծածկագիր (ԱՄՏԾ)	AMGLBLB24ER9
Թողարկման ամսաթիվ (օր/ամիս/տարի)	24.11.2016թ.
Տեղաբաշխման ամսաթիվ (օր/ամիս/տարի)	24.11.2016թ.
Մարման ամսաթիվ (օր/ամիս/տարի)	24.11.2018թ.
Թողարկման ծավալ (ՀՀ դրամ)	200,000,000 (երկու հարյուր միլիոն) ՀՀ դրամ
Տեղաբաշխման ծավալ (ՀՀ դրամ)	200,000,000 (երկու հարյուր միլիոն) ՀՀ դրամ
Ներկայացված գնման հայտերի ընդհանուր ծավալ /ՀՀ դրամ/	410,030,102 (չորս հարյուր տասը միլիոն երեսուն հազար հարյուր երկու) ՀՀ դրամ
Բավարարված գնման հայտերի ընդհանուր ծավալ /ՀՀ դրամ/	200,030,102.30 (երկու հարյուր միլիոն երեսուն հազար հարյուր երկու) ՀՀ դրամ և 30 (երեսուն) լումա
Աճուրդի մասնակիցների քանակ	5
Պահանջարկը տեղաբաշխված ծավալի համեմատ	205 %
Տեղաբաշխված արժեթղթերի կտրման գինը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ
Տեղաբաշխված արժեթղթերի կտրման եկամտաբերություն	14%
Տեղաբաշխված արժեթղթերի միջին կշռված եկամտաբերություն	13.9911%
Մեկ պարտատոմսի անվանական արժեք (ՀՀ դրամ)	10,000 (տասը հազար)
Արժեկտրոնային եկամտաբերություն	14 (տասնչորս) %
Արժեկտրոնի վճարման պարբերականություն	կիսամյակային
Քանակ (հատ)	10,000 (տասը հազար)

Լրացուցիչ տեղեկությունների կամ հարցերի դեպքում կարող եք զանգահարել «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ հետևյալ հեռախոսահամարներով՝ +(374 10) 70 70 10, 70 70 11 կամ «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ հետևյալ հեռախոսահամարով՝ +(374 10) 54 87 87: